
**ԷԹՆԻԿ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ
ՀԱՄԱԽՄԲՄԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՈՒՄ**

ՃՈՂՈՒՅԱՆ Ս. Ա.

Ժողովրդավարական համախմբումը վերաբերում է քաղաքական զարգացման ամբողջ գործընթացին, ներկայացուցչական ժողովրդավարության մրցակցության հաստատման կանոնների համաձայն՝ տարբեր քաղաքական ուժերի փոխհարաբերությունների, հասարակության քաղաքական մշակույթի մեջ խորքային փոփոխությունների կերպափոխմանը բնորոշ առանձնահատկություններին և օրինաչափություններին:

Դեռևս 1986 թ. Գ. Օ'Դոննելը և Ֆ. Շմիտտերը իրենց հրապարակած «Անցումներ ավտորիտար կառավարումից» աշխատության մեջ¹, հանրագումարելով Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի երկրների ժողովրդավարացման փորձը, որպես գիտաբառ առաջադրեցին «ժողովրդավարության համախմբում» հասկացությունը՝ գտնելով, որ դրա օգնությամբ հնարավոր է դուրս գալ քաղաքական զարգացման ճգնաժամերից (այդ թվում՝ ինքնության ճգնաժամից): XX դ. 90-ական թվականներին այս մոտեցումը դարձավ ժողովրդավարական անցման՝ որպես քաղաքական զարգացման մոդելի անորոշությունները և ճգնաժամերը հաղթահարող առաջատար դրույթներից մեկը՝ նկատի ունենալով, որ նրա օգնությամբ էթնոսները կարող են հաղթահարել «կախյալ զարգացման» փուլը, որն արտացոլում է նոր ժողովրդավարական վարչակարգերի կայացման գործընթացների անարդյունավետությունը: Այս նկատառումներով, ժողովրդավարական անցման գործընթացում գտնվող երկրներում էթնիկ արժեքային համակարգի արդիականացման և բնականոն կերպափոխման համար սկսեցին տեսական նոր դրույթներ մշակել: Դրա հետ մեկտեղ տեղի ունեցավ նաև ակնհայտորեն արտահայտված մեթոդաբանական շրջադարձ: Այն պայմանավորված էր XX դ. 60-80-ական թվականներին գերիշխող՝ ժողովրդավարության պայմանների հայեցակարգի քննադատությամբ: Ընդհանուր քննադատական տրամադրվածության հետ մեկտեղ քաղաքագետներն ընդունում են նախորդ հայեցակարգի ներդրումը ժողովրդավարացման անհրաժեշտ գործոնների բացատրման հարցում, բայց կարծում են, որ դա բավարար չէ. պետք է որոշել ոչ միայն անհրաժեշտ, այլև բավարար գործոնները և ոչ միայն ազատականացման տեսքով ժողովրդավարության անցման, այլև ժողովրդավարական համախմբման կայացման համար: Այս առումով ուշագրավ կարծիք է արտահայտում Ֆ. Շմիտտերը՝ գրելով, թե ժողովրդավարացման մասին ներկայիս բանավեճը բացասական վերաբերմունք է ներառում լայնորեն տարածված նախորդ դատողության նկատմամբ, ըստ որի՝ ժողովրդավարությունը գործառնական

¹ Տե՛ս Օ'Donnel G., Schmitter Ph. and Whitehead L. (eds), *Transitions from Authoritarian Rule: Prospects for Democracy*, Baltimore, 1986.

պայման է կամ բարոյական հրամայական: «Ո՛չ տնտեսական զարգացման մակարդակը, ո՛չ էլ բուրժուազիայի գերիշխանությունը չեն կարող ինքնաբերաբար երաշխավորել ժողովրդավարության առաջացումը ու, առավել ևս, ամրապնդումը: Այդ վարչակարգը նաև «քաղաքակրթության», գրագիտության, կրթական հաջողությունների կամ առանձնահատուկ քաղաքական մշակույթի՝ նվաճված նախորդ մակարդակի ակնհայտ արդյունքը չէ: Մա չի բացառում այն փաստը, որ բարեկեցությունը, հարստության հարաբերականորեն հավասար բաշխումը, միջազգային շուկայում մրցունակ տնտեսությունը, լավ կրթված բնակչությունը, սովոր միջին խավը, ինչպես նաև բազմազանությունն ընդունելու, մրցակցին վստահելու և բախումները փոխզիջմամբ լուծելու պատրաստակամությունը առավելություններ են. սակայն սա նշանակում է, որ ժողովրդավարությունը դեռևս պետք է ընտրվի, մարմնավորվի ու հավերժացվի «գործակալների», իրատես ապրող քաղաքական դերակատարների կողմից՝ իրենց հատուկ շահերով, կրքերով, հիշողությամբ և, ինչո՞ւ ոչ՝ բախտով ու խիզախությամբ»²:

Ելակետ ընդունելով Ֆ. Շմիտտերի և Օ՛հոնսելի մոտեցումը՝ կարծում ենք, որ ժողովրդավարական համախմբման օգնությամբ հնարավոր է ուսումնասիրել ժողովրդավարական անցման գործընթացում էթնիկ «եսի» կերպափոխման բազմաչափությունը: Այս տեսանկյունից ժողովրդավարական համախմբումը էթնիկ կեցության արդիականացման գործընթացում քաղաքական հարաբերությունների հիմնավորման արժեքային համակարգ է՝ ժողովրդավարական իհաստատությունների հետագա գործառնության հուսալիության իմաստով: Այսինքն՝ համախմբված ժողովրդավարությունը էթնիկ ինքնության համակարգի կողմից ժողովրդավարության համապատասխան մոդելի ընտրության հիմնային պայմանն է:

Հետևաբար, առանձնապես ուշադրության են արժանի նախ՝ քաղաքական զարգացման ընթացքում էթնիկ ինքնության հարատև և բնականոն արդիականացման ապահովման, ապա՝ համամարդկային արժեքների հետ ունեցած տարաբնույթ կապերի հարաբերության հարցերը: Լինելով բարդ և բազմաբնույթ երևույթ՝ էթնիկ ինքնությունը ստեղծվում է որոշակի էթնիկական հանրույթի պատմական զարգացման ընթացքում՝ իրադարձությունների, պարտությունների և հաղթանակների ազդեցության տակ: Եթե տվյալ էթնոսն իր ինքնությունը ձևավորել է բռնությամբ՝ տեղադրվելով ուրիշի տարածքներին, հոգևոր արժեքներին, ապա դա իր կնիքն է թողնում նրա կողմից իրականացվող իշխանության վրա: Նման դեպքում տվյալ էթնոսի ինքնության համակարգում գերիշխող է դառնում այն հոգեբանությունը, թե բռնությունը և այլ ազգերի վրա գերիշխանություն հաստատելը, իբրև, իրենց ի վերուստ տրված իրավունք է՝ պատմական առաքելություն: Այս առումով ինքնությունը հնարավորություն է ստեղծում հաշվառել էթնոսի «եսի» լինելության առանձնահատկությունները՝ իր իսկ կողմից իրականացվող քաղաքական իշխանության արդիականացման մեխանիզմում: Փաստորեն, էթնիկ ինքնությունը ենթադրում է

² Schmitter Ph., *Interest Systems and the Consolidation of Democracies (Reexamining Democracy. Essays in Honor of Seymour Martin Lipset)* London, New Delhi, 1992, p. 158-159.

կենսագործունեության ձևերի այնպիսի որպիսություն, որոնք կարելի է ազատականորեն ընտրել տվյալ իշխանության սահմաններում՝ պահպանելով ոգու հաղթանակի կարողությունն ընդդեմ համահարթեցման:

Հայեցակարգային առումով ժողովրդավարության համախմբումը կարող է ներկայացվել իրար որոշ չափով փոխլրացնող մի քանի մոտեցումներով, քանի որ դրանցից յուրաքանչյուրը, համախմբման այս կամ այն կառուցակարգերն ու գործոնները մշակելով, որևէ ձևով ստիպված է փոխհատուցել մրցակցող մոտեցումների թերությունները: Բոլոր հետազոտողները համաձայն են, որ համախմբումը՝ երկարատև ու հակասական, նորամույժ կառուցակարգեր ենթադրող և, հնարավոր է, ժողովրդավարական քաղաքական համակարգերի մասին արևմտյան պատկերացումները կատարելագործող, ժողովրդավարական անցման կայացման անհրաժեշտ փուլն է: Լ. Դայմոնդը, խոսելով ժողովրդավարության համախմբման և դրա որակի միջև առկա կապի մասին, գրում է. «Ժողովրդավարական համախմբումը խրախուսվում է հաստատություններում, քաղաքականությունում և վարքագծում՝ բազում փոփոխություններով: Դրանցից շատերը ուղղակիորեն բարելավում են կառավարումը՝ պետության իրավասությունն ամրապնդելով, տնտեսական կառույցներն ազատականացնելով ու իրատես դարձնելով, սոցիալական անվտանգության և քաղաքական կարգի միջոցով՝ հիմնական ազատությունների ապահովման հետ մեկտեղ, հորիզոնական հաշվետու լինելու և իրավունքի գերիշխանության, կոռուպցիայի նկատմամբ վերահսկողության միջոցով: Այլ փոփոխությունները քաղաքական կուսակցությունների և սոցիալական խմբերի հետ դրանց կապերի զարգացման, կուսակցական համակարգի հատվածականության նվազեցման, օրենսդրական մարմինների ու տեղական իշխանությունների՝ հասարակության առջև պատասխանատվության և սեփական իրազեկության մեծացման, քաղաքացիական հասարակության ամրապնդման միջոցով բարելավում են ժողովրդավարական կառավարման ներկայացուցչական գործառնությունները»³: Փաստորեն, ժողովրդավարության համախմբումը, ըստ անցումագետների, ներառում է չորս ուղղություն. 1) արագ սահմանափակել, նվազագույնի հասցնել կամ կապակցել իր գաղափարական ու ինստիտուցիոնալ անհամապատասխանությունները. 2) հաստատել իր ինքնավարությունը հին իշխանությունների, հատկապես, զինվորական ուժերի առջև. 3) մոբիլիզացնել քաղաքացիական հասարակությանը՝ իր արտահայտման ձևերով. 4) զարգացնել ժողովրդի առջև պատասխանատու, կառավարություն կազմավորելու ընդունակ, հարաբերականորեն կայուն կուսակցական համակարգ⁴: Ընդունելով այս մոտեցումը՝ կարծում ենք, որ էթնիկ ինքնության բնականոն կերպափոխման առումով անհրաժեշտ է համախմբման գործընթացում նաև հաշվի առնել նախ մշակութային առանձնահատկություններն ու սինթետիկության հնարավորու-

³ Dimond L., *Introduction: In Search of Consolidation (Consolidating the Third Wave Democracies. Regional Challenges)*, Baltimore, London, 1999, p. XVII.

⁴ Տե՛ս O'Donnel G., Schmitter Ph. and Whitehead L. (eds), նշվ. աշխ., էջ 73, 89:

թյունները, ապա էթնիկ «եւ-ը» կրող մարդու հնարավորությունները տեխնոգեն և ինստիտուցիոնալ արժեքային համակարգերի ընկալման և դրանցում իր տեղն ու դերը որոշելու ընդունակությունը: Այս առումով անհրաժեշտ ենք համարում որոշակի լրացումներ կատարել՝ հստակեցնելով 80-ականների կեսերի վերլուծությունները.

Առաջին, ժողովրդավարության համախմբման գործընթացը ենթադրում է ոչ միայն նոր նորմերի ու կառույցների ինստիտուցիոնալացում, այլև հաճախ կապված է ավանդական մշակույթի տարրերի օգտագործման և նախորդ մենիշխանական վարչակարգի նկատմամբ նվազ արմատական վերաբերմունքի հետ:

Երկրորդ, ժողովրդավարության համախմբումը, առանց պետական կառույցների համապատասխան բարեփոխման, անհնար է, և նոր հաստատվող ժողովրդավարությունը հակասության մեջ է մտնում ոչ միայն պետական կառավարման մենիշխանական ոճի հետ, այլև իրավական նորմերով ռացիոնալացված՝ կառավարման բյուրոկրատական մեքենայի հետ:

Երրորդ, պարտադիր չէ, որ ժողովրդավարության համախմբումը հետևի մեկ՝ ազատական մոդելին. այն կարող է իրագործվել բազմապիսի ձևերի ու մոդելների յուրատեսակ զուգակցմամբ:

Չորրորդ, թեև կուսակցական համակարգը ժողովրդավարության առանցքային տարրն է, սակայն դրա համախմբումը, երբեմն ինքնաբերաբար առաջացող շարժումների, մարզինալության, տեղական ինքնակառավարման միջոցով շահերի արտահայտման հարաշարժ գործընթացի համար ենթադրում է որոշակի պաշար (ռեզերվ):

Հինգերորդ, ժողովրդավարության համախմբումն ունի նաև միջազգային չափորոշիչներ, որոնք կապված են ոչ միայն նոր ժողովրդավարություններին ցուցաբերվող օգնության, այլև ժողովրդավարացող երկրների՝ որպես իրավահավասար գործընկերների՝ միջազգային միություններում ընդգրկման հետ:

Ակնհայտ է, որ ժողովրդավարական համախմբումը կապված է երկու գործընթացների՝ ժողովրդավարական վարչակարգի գործողության հետ անհամատեղելի՝ հին համակարգի մնացորդների վերացման և ժողովրդավարական խաղի կանոններն ամրապնդող նոր հաստատությունների կառուցման հետ: Ժողովրդավարական համախմբումը բխում է ժողովրդավարության նվազագույն սահմանումից, որը ներառում է գաղտնի քվեարկություն, համընդհանուր ընտրական իրավունք և կառավարության պատասխանատվություն: Այս սահմանումը հիմնվում է Ռ. Դալի նկարագրած՝ ժողովրդավարության համար անհրաժեշտ պոլիարխիկ պայմանների ստեղծման հայեցակարգի վրա⁵: Կարելի է ասել, որ երկրում առկա է համախմբված ժողովրդավարություն, եթե բոլոր հիմնական քաղաքական ուժերն ու գործիչներն ընդունում են ժողովրդավարության նվազագույն սահմանմանը համապատասխանող ժողովրդավարական խաղի կանոնները, եթե նրանցից ոչ ոք չի օգտագործում այդ

⁵ Տե՛ս **Даль Р.,** *Демократия и ее критики* (пер. с англ. под ред. М. В. Ильина), М., 2003, с. 428-429.

կանոններից դուրս գտնվող որևէ միջոց: Այստեղ, ինչպես երևում է, շեշտը դրվում է պայքարող քաղաքական ուժերի՝ որպես իրենց գործունեության հրամայականներ ընդունած փոխհարաբերությունների ժողովրդավարական կանոնների ինստիտուցիոնալացման վրա: Փաստորեն, խոսքը քաղաքական պայքարի շրջանակների որոշակի ամրագրման մասին է, որոնց խախտումը սպառնալիքի տակ կդնի ողջ ժողովրդավարական քաղաքական համակարգի կայացումը և էթնիկ «եսի» բնականոն արդիականացումը:

Քաղաքական խաղի կանոնների ամրագրման ներքին պայմաններին հատուկ ուշադրություն է դարձնում նաև Լ. Դայմոնդը: Նա տարբերություն է դնում մի կողմից՝ ձևական բնույթ ունեցող ընտրական ժողովրդավարության, մյուս կողմից՝ ոչ միայն ընտրությունների պաշտոնական ընթացակարգի, այլև քաղաքացիական իրավունքներն ու քաղաքական ազատություններն ապահովող՝ իրական ազատական ժողովրդավարության միջև: Օգտագործելով «Ազատության տան» ցուցանիշը՝ նա խոսում է այն մասին, որ 90-ական թվականներին ազատական ժողովրդավարության սկզբունքների հաստատման գործընթացի վերլուծությունն ապացուցում է, որ «պաշտոնական ժողովրդավարությունների» մեջ ազատ պետությունների մասնաբաժինը նվազման միտում ունի՝ դեպի «չհաջողված պետություններ»: «Ըստ էության,– գրում է Դայմոնդը,– համախմբումը այնպիսի լայն ու խոր լեգիտիմացման նվաճման գործընթաց է, որի դեպքում բոլոր քաղաքական դերակատարները՝ ինչպես ընտրանու, այնպես էլ զանգվածների մակարդակով, հավատում են, որ իրենց հասարակության համար ժողովրդավարական վարչակարգը ավելի լավն է, քան ցանկացած այլ իրատեսական այլընտրանք, որն իրենք կարող են երևակայել»⁶: Ընդ որում, նման լեգիտիմությունը ենթադրում է ոչ միայն համակարգի նկատմամբ ինչ-որ մի վերացական վստահություն, այլ որոշակի նորմատիվային պարտավորությունների ու վարքաբանական կառույցների ներառում էթնիկ գիտակցության մեջ:

Այս գործընթացում որոշիչը էթնիկ մշակույթի համակարգում ժողովրդավարական քաղաքական մշակույթի սկզբունքների ձևավորումն է, որը ենթադրում է անցում ժողովրդավարության «գործիքային» դրույթներից «սկզբունքայիններին», այսինքն՝ ժողովրդավարությունն այդ դեպքում դառնում է արժեք, որը քաղաքական սոցիալականացման ընթացքում փոխանցվելով որպես հույսի կամուրջ՝ հանուն էթնիկ միաբանության, առաջատարի իրավունքով արմատավորվում է էթնիկ պատկանելություն ունեցող անձի արժեքային կառուցվածքում⁷: Կատարելով ժողովրդավարության համախմբման գործընթացների համեմատական վերլուծություն՝ Լ. Դայմոնդն ապացուցեց, որ ժողովրդավարական քաղաքական մշակույթը էթնիկ գիտակցության վրա ներազդում է տարբեր եղանակներով՝ իշխող ընտրանու խմբերի գիտակցության և զգացողության փոփոխությամբ, զանգվածային քաղաքական մշակույթի փոփոխմամբ, ժողովրդավարական նորմերի և նախապատվությունների աշխուժացմամբ: Լ. Դայմոնդը շեշտը դնում է ժամանակի ընթացքում ժողո-

⁶ Даймонд Л., *Прошла ли «третья волна» демократизации?* (Полис, 1999, N 1, с. 22-23).

⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 24:

վերոգրվածության ամրապնդման կամ փլուզման համար ընտրանու պատասխանատվության վրա: Նա համոզված է, որ ժողովրդավարական քաղաքական մշակույթը, երկխոսություն ստեղծելով ավանդականի հետ, կարող է ինչպես ընդլայնել, այնպես էլ նեղացնել էթնիկ «եսի» բնականոն կերպափոխման հնարավորությունները. «Իրականում կարելի է պնդել, որ առանց որոշ նկատելի տեղաշարժերի կամ քաղաքական մշակույթում փոփոխությունների բացակայության՝ ժողովրդավարության դերի, ուժի կամ կայունության փոփոխությունները հազվադեպ են պատահում: Քաղաքական մշակույթն անփոփոխ երևույթ չէ: Սոցիալական և տնտեսական փոփոխությունը, սոցիալական և քաղաքական հավաքագրումը, ինստիտուցիոնալ և պատմական փորձը, միջազգային փոփոխությունները կարող են աստիճանաբար կերպափոխել գերակա քաղաքական արժեքները, հավատալիքները և մոտեցումները պետության ներսում: Սակայն փոփոխվելու և անփոփոխ լինելու երկու դեպքերում էլ քաղաքական մշակույթը որոշակի հնարավորություններ է ստեղծում ժողովրդավարության համար»⁸:

Ժողովրդավարական անցման գործընթացի և դրա համախմբման միջև տարբերությունը հանգեցնում է որոշ անհրաժեշտ և բավարար պայմանների սահմանմանը, որի դեպքում կարող է սաղմնավորվել համախմբման գործընթացը: Անդրադառնալով դրան Ջ. Լինցն ու Ա. Ստեփանը երեք այդպիսի պայման են նշում.

Առաջին, առանց պետության առկայության, հասարակության ժամանակակից կազմակերպման պայմաններում ազատ և ընդունված ընտրությունները չեն կարող իրականացվել. հաղթողները չեն կարող լեգիտիմ իշխանության մենաշնորհ իրականացնել, իսկ քաղաքացիները (և ոչ թե էթնիկ խմբերը)՝ արդյունավետ կերպով իրացնել օրենքի գերիշխանությամբ պաշտպանված իրենց իրավունքները:

Երկրորդ, ժողովրդավարությունը չի կարող համախմբված դառնալ, եթե ժողովրդավարական անցումն ավարտված չէ: Այն համարվում է ավարտված, երբ իշխանության բոլոր ճյուղերի (օրենսդիր, գործադիր և դատական) գործունեությունը մեծապես ազատ է զինվորական կառույցներից և այլ ավտորիտար ուժերից:

Երրորդ, ոչ մի վարչակարգ չի կարող ժողովրդավարական անվանվել, քանի դեռ նրա կառավարողները ժողովրդավարական սկզբունքներով չեն կառավարում, այսինքն՝ գործադիր իշխանությունը չի անտեսում սահմանադրությունը, անձի և փոքրամասնությունների իրավունքները չեն ճնշվում, օրենսդիր իշխանության գործերին նա չի միջամտում և այլն⁹:

Ակնհայտ է, որ համախմբված կարող է լինել ոչ միայն ժողովրդավարությունը, այլ նաև ոչ ազատականացված, ոչ ժողովրդավարական վարչակարգը կեղծ, խառնածին կամ էլ ածականակերտ ժողովրդավարությունները, որտեղ ժողովրդավարական ինստիտուտները գոյակցում են ոչ ժողովրդավարականների

⁸ *Political Culture and Democracy in Developing Countries*, London, 1993, p. 10-11.

⁹ **Linz J., Stepan A.**, *Toward Consolidated Democracies* (*Journal of Democracy*, 1996, vol. 7, N 2, p. 14-15):

հետ ժողովրդավարական պետության վերահսկողությունից դուրս: Համախմբված ժողովրդավարություն ասելով՝ նրանք, այսպիսով, հասկանում են «քաղաքական վարչակարգ, որի օրոք ժողովրդավարությունը որպես իհաստատությունների, կանոնների և կառուցվածքային դրդումների ու խոչընդոտների բարդ համակարգ, բառացիորեն դարձել է «միակ խաղը քաղաքում» (*the only game in the town*)¹⁰: Համաձայն հեղինակների՝ քաղաքականության այսպիսի ընկալումը ենթադրում է վարքաբանական, գործոնային և սահմանադրական մեկնաբանումներ:

Վարքաբանական իմաստով ժողովրդավարական վարչակարգն այն դեպքում կարելի է համախմբված համարել, երբ ոչ մի էթնիկ, ազգային, սոցիալական, տնտեսական, քաղաքական կամ ինստիտուցիոնալ նշանակալից դերակատար հնարավորություն չունի իր նպատակներին հասնելու ոչ ժողովրդավարական վարչակարգի ստեղծման կամ էլ պետությունից առանձնացման միջոցով:

Գործոնային իմաստով ժողովրդավարական վարչակարգը համախմբված է, երբ բնակչության ճնշող մեծամասնությունը, նույնիսկ տրնտեսական հիմնախնդիրների ու հիասթափությունների առկայության պայմաններում, կարիք ունի, որ ժողովրդավարական ընթացակարգերը և ինստիտուտներն առավելագույնս համապատասխանեն հասարակական կյանքի կառավարմանը, երբ հակահամակարգային այլընտրանքների պաշտպանումը փոքրիշատե մեկուսացված է ժողովրդամետ ուժերից:

Վերջապես, *սահմանադրական իմաստով* ժողովրդավարական վարչակարգը համախմբված է, երբ կառավարողներն ու կառավարվողները ընթացակարգերի և հաստատությունների շրջանակներում միևնույն կերպ են ենթարկվում բախումների լուծման մեխանիզմին՝ նոր ժողովրդավարական ընթացակարգ հաստատած սահմանադրական կարգին: Համախմբված ժողովրդավարության պայման կարող է դառնալ քաղաքացիական հասարակության՝ հարաբերականորեն ինքնավար քաղաքական գիտակցություն ունեցող հասարակության, պետության ու հիմնական քաղաքական դերակատարների կողմից իրավունքի գերակայության, անհատական ազատությունների պաշտպանության, ինստիտուցիոնալացված ազատ շուկայական հարաբերություններ ընդունող հասարակության առկայությունը:

Ինչպես նշել ենք վերևում, ժողովրդավարության համախմբման գործընթացներում գլխավոր դերակատարը ընտրանին է, որն իր հոգնական կարգավիճակով ռազմավարական դեր է կատարում հասարակությունում առկա էթնիկական տարբեր խմբերի վարքաբանության քաղաքակրթման և ժողովրդավարական արժեքների ներդրման առումով: Մ. Մարգարյանը նկատում է, որ անհրաժեշտ է հաշվի առնել այն, որ հոգնական ընտրանու տեսության հայեցակարգն օգտագործելիս ժողովրդավարության համախմբումը ներկայանում է որպես ընտրանու տարբեր խմբերի կողմից ըստ ընտրության իրականացվող վերափոխումների գործընթաց¹¹: Այդ խրմբերի միջև հարաբերությունները և

¹⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 16:

¹¹ Տե՛ս *Մարգարյան Մ.*, Քաղաքական արդիականացման և զարգացման հիմնահարցեր, Ե., 2004:

ժողովրդավարության նկատմամբ վերաբերմունքը հենց ժողովրդավարական անցման հիմնախնդրի էությունն են: Ընտրանու տարբեր խմբերի՝ իշխանության համար մղած պայքարը հաճախ շրջում է միանշանակ կախվածությունը ժողովրդավարության և ժողովրդավարական ընտրանու միջև: Այդ դեպքում ժողովրդավարության համախմբումը որոշվում է ավանդական և ազատական ընտրանու քաղաքական գիտակցության իրատեսության մակարդակով: Ոչ ժողովրդավարական քաղաքական վարչակարգի վերականգնումը թույլ չտալու ձգտման և ժողովրդավարության հաստատման դրույթի միջև սահմանը բավականին շարժուն և թափանցիկ է, և հենց այս նկատառումներով էլ հանրագումարի բերելով Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի երկրների ժողովրդավարական անցման փորձը՝ Ջ. Հիգլին և Ռ. Գյունտերը գրում են. «Քիչ քաղաքական դերակատարներ են պատրաստ իրենց ապագան կախվածության մեջ դնել ժողովրդավարական հաստատություններից. նրանք իրենց դիրքերն ամրապնդելու համար այլ՝ հաճախ ոչ իրավական ու հակաժողովրդավարական ուղիներ են փնտրում՝ աջակցելով ժողովրդավարական գործընթացին, քանի դեռ վերջինս չի սպառնում իրենց շահերին»¹²: Այս իմաստով ժողովրդավարության համախմբման հիմնական խնդիրն իրապես ժողովրդավարական ընտրանու ձևավորումն է, որը կարող է էթնիկ արժեքային համակարգը ժողովրդավարական ընթացակարգին ենթարկել և նրա կերպափոխման գործընթացը իրականացնել ժողովրդավարական խաղի կանոնների շրջանակում:

Ժողովրդավարական անցման գործընթացում գտնվող էթնոսների փորձից ելնելով՝ անհրաժեշտ է նկատել, որ երբ իրադարձությունները շիթային են, իսկ դերակատարների վարքը իրատես չէ, դաշնակիցները մարգինալ են, հաստատությունները գործառույթներ չեն իրականացնում, աջակցության հավանականությունը անհնար է հաշվարկել, ռիսկերից հնարավոր չէ «ապահովագրվել», ապա նման դեպքերում հասարակական գիտություններն իրենց դասական մոտեցումներով չեն կարողանում իրատես վերլուծություններ կատարել: Արդ, անցումագիտության հայեցակարգերի օգնությամբ կարևորելով ժողովրդավարական անցման ձևական մոդելը կառուցելու անհրաժեշտությունը՝ առաջարկում ենք համախմբագիտության օգնությամբ հետևյալում իստական տարածքում էթնիկ ինքնության կերպափոխման գործընթացների մասին կուտակված նյութի ուսումնասիրության իրատես վերլուծություն կատարել: Համախմբագիտությունը հնարավորություն է տալիս իրականացնելու ժողովրդավարական անցման գործընթացում անորոշությունից դուրս գալու և քաղաքական կայունություն պահպանելու նպատակով կնքվող «համաձայնագրերի» համակարգային ուսումնասիրություն՝ հասարակությունում առկա տարբեր էթնիկ «ես»-երի կերպափոխման և նրանց կողմից համակցության կանոնների պահպանմամբ քաղաքացիավարական (*civilarchy*) մշակույթի հաստատման համար:

¹² Higley J., Gunther R. (eds.), *Elites and Democratic Consolidation in Latin America and Southern Europe*, Cambridge, 1992, p. 31.

Այս պատճառով դժվար է գնահատել ժողովրդավարության համախմբման (որը չի նույնացվում տևողությանը, կայունությանը կամ գոյատևմանը) հայեցակարգը և անտեսել այն հանգամանքը, որ, անցումագետները հետանցումային իրողությունները գնահատելիս վերջին ժամանակներում մեծ ուշադրություն են հատկացնում «ժողովրդավարության որակի» ուսումնասիրմանը: Վերջինս հետանցումային իրողությունների ռացիոնալ գնահատման առումով դիտարկել է Ֆ. Շմիտտերը¹³: Հետկոմունիստական երկրների փորձը ընդհանրացնելով՝ նա խոստովանում է, որ այս հասկացությունն օգտագործվում է այնքան տարբեր իմաստներով և այնպիսի տարբեր խնդիրների լուծման ժամանակ, որ կորցրել է իր հայեցակարգային հատկությունների մեծ մասը: Սակայն ակնհայտ է, որ *ժողովրդավարական համախմբում* հասկացությունը կարելի է դիտարկել որպես էթնիկ ինքնության մակարդակում քաղաքացիավարական մշակույթի հաստատման գործընթաց, որը ժողովրդավարական վարչակարգի գոյության տևողության և կայունության չափորոշիչ է: Այս նկատառումներով էլ կարող ենք ասելու, որ հետկոմունիստական երկրներում «անցում – համախմբում» հարացույցի (պարադիգմայի) կիրառման համար ձևավորվել են հասարակական-քաղաքական այլ իրողություններ, քան անցումը սկսելիս: Սակայն գործընթացի բազմաչափությունը հնարավորություն է տալիս ասելու, որ անցման պայմաններում մի դեպքում ժողովրդավարության անորոշությունն առաջանում է չափազանց մեծ սոցիալական հոգնականությունից, մյուսում՝ քաղաքական կուսակցությունների կամ քաղաքացիական հասարակության որակից, հաջորդ դեպքում որոշիչ են համարվում նոր ազատական տնտեսական բարեփոխումները, և վերջապես՝ ժողովրդավարությունը կարող է չհաստատվել, եթե բացակայում է էթնիկ ինքնության մեջ համակեցության նորմերը պահպանելու սկզբունքը, երբ քաղաքացիավարական մշակույթի հաստատմանն ընդդիմանալով՝ էթնիկ «եսը» կառչում է իր էթնոկենտրոն արքետիպերից և գիտակցորեն չի գնում հանրային շահերի զուգամիտման՝ անտեսելով «հանրային շահը համընդհանուր բարիքն է» ռուսոյական սկզբունքը: *Այս անհանդուրժողականությունը անընդհատ նոր անորոշություն է ստեղծում ժողովրդավարական անցման մոդելը որպես համակարգային ամբողջություն դիտարկելու առումով*: Մեր կարծիքով, եթե նոր ժողովրդավարությունների իրատես գնահատման նպատակով հիմնվենք ոչ միայն տնտեսական զարգացման մակարդակի, այլ նաև էթնիկ «եսի» կողմից համակեցության նորմերի պահպանման սկզբունքների՝ որպես ժողովրդավարության կայունության հիմնական բանաձևի վրա, ապա հնարավորություն կստանանք դիտարկելու այնպիսի ցուցանիշ, ինչպիսին «*ժողովրդավարության որակն*» է: Տվյալ ցուցանիշի հայեցակարգային իմաստավորումը ենթադրում է ոչ միայն տնտեսական զարգացման, այլև որոշակի սոցիալականացման, ինստիտուցիոնալացման այնպիսի մակարդակ, որը էթնոսներին հնարավորություն է տալիս ճնշման խմբերի տեսքով քաղաքական կառավարմանը իրատես մասնակցություն ունենալ:

¹³ **Schmitter Ph.** *From an Iron Curtain of Coercion to a Paper Curtain of Concepts: Grounding Transilogist or Confining Students of Postcommunism?* (Slavic Review, 1995, vol. 54, N 4).

Մեր կարծիքով՝ հետխորհրդային անցումների հետազոտողները այս մոտեցումը լրջորեն չեն ուսումնասիրել, գուցե և այն պատճառով, որ համաձայն են Մ. Մաքֆուլի այն կարծիքին, որ հետկոմունիստական տարածքներում ժողովրդավարական անցման գործընթացում պետք է գերակայի «*հեղափոխությունը ներքևից*»¹⁴։ Մինչդեռ հետխորհրդային երկրները պետք է ժողովրդավարության համախմբման փուլ անցնեն և դրանից հետո միայն կարելի է դատողություններ անել նման արդյունքների հանգեցրած այն պայմանների մասին, որոնք ձևավորել են ժողովրդավարությունների առկա որակը։ Ակնհայտ է, որ հետկոմունիստական երկրները հասել են համախմբման որոշակի մակարդակի, այդ պատճառով էլ կարելի է գնահատել այն, ինչը ստացվել է որպես վերջնական արդյունք և ոչ թե պլանավորել նոր անցում, ինչպես կարծում է Մ. Մաքֆուլը՝ «*հեղափոխություն ներքևից*»։ Փաստ է, որ հետկոմունիստական երկրներում վարչակարգային փոփոխություններն ավարտվել են, և ոչ հետանցման, ոչ էլ երկրորդ հեղափոխական անցման անհրաժեշտություն չկա։ Իսկ հետագա ինստիտուցիոնալ և վարքաբանական տեղաշարժերը, թվում է, կրելու են արդեն «ներժողովրդավարական» բնույթ, այսինքն՝ ենթադրվում է անցում ժողովրդավարության մի ձևից մյուսին։

Քաղաքական զարգացման նման տրամաբանությունը գործնականորեն բնորոշ է բոլոր նոր ժողովրդավարություններին՝ անկախ տարածաշրջանից և անցումի հենման կետից։ Ազատություն ձեռք բերելով՝ դրանց քաղաքացիները ոչ միշտ են օգտվում իրենց համատեղ ուժերով ստեղծած բարիքներից։ Կորցնելով հույսը, որ իրենց ևս ամերիկացիների և բրիտանացիների նման կհաջողվի ստեղծել «քաղաքացիական քաղաքական մշակույթ», ինքնության ճգնաժամ ապրող հետկոմունիստական տարածաշրջանի երկրները գտնվում են հիասթափության ալիքի ազդեցության տակ, որից նրանք կարող են ազատվել միայն ժողովրդավարական քաղաքական մշակույթի և վարքաբանության առկայության պայմաններում¹⁵։ Հենց այդ հանգամանքն է ստիպում բարձրացնել քաղաքացիների քաղաքական կրթվածությունը, որի առկայության պարագայում աճում է նրանց պահանջկոտությունը սեփական երկրի քաղաքական հաստատությունների նկատմամբ՝ քաղաքական գործիչներին ստիպելով քաղաքացիավարական կառավարում և սահմանադրական քաղաքականություն իրականացնել։ Այս պայմաններում խաղային տրամաբանություն ենթադրող անցման ընթացքում անորոշությունից դուրս գալու համար ժամանակի առումով քննարկվող հարցերը դառնում են ավելի բազմաշերտ, և դրանց լուծումները պայմանավորվում են ոչ միայն քաղաքական ընտրանու տարբեր շերտերի միջև թաքուն կնքված փոքր համաձայնագրերով, այլև տարբեր էթնոսների միջև համակեցության փոխզիջումային տարբերակների փնտրտուքով։ «Անցում-համախմբում» հարացույցի համաձայն՝ ժողովրդավարության ճակատագրի համար որոշիչ նշանակություն ունի ոչ թե քաղաքական ճգնաժամների առկայությունը, այլ այն հանգամանքը, թե արդյոք քաղաքական ընտրանին ու

¹⁴ St' u McFaul M., *The Fourth Wave of Democracy and Dictatorship. Noncooperative Transitions in the Postcommunist World* (World Politics, January, 2002):

¹⁵ St' u Алмонд Г., Пауэлл Дж., Стром К., *Сравнительная политология сегодня: мировой обзор*, под ред. М. В. Ильина, А. Ю. Мельвиля, М., 2002, с. 195.

շաղքալին քաղաքացիներն ունակ են ընդունված կանոններով փոխադարձաբար համագործակցելու կամ մրցելու ազատ և ընդունված կարգով: Երբ «մասնակի ժողովրդավար» վարչակարգում ամրագրվում է հարաբերությունների նման համակարգ, ապա դրանք վերածվում են ժամանակակից ազատական ներկայացուցչական ժողովրդավարության: Դրա շնորհիվ այստեղ կարող է և առաջանալ այդ կարգն ամրապնդող ժողովրդավարական քաղաքական, քաղաքացիական մշակույթ, որը կհանգեցնի ժողովրդավարության որակի բարձրացմանը:

Մեր նման եզրակացությունը լիովին ներառվում է ժողովրդավարական անցման ընդհանուր մոդելի մեջ: Ժամանակին Տ. Լ. Կարլը և Ֆ. Շմիտտերը, Օ'Դոննելի հետ համատեղ համեմատելով ժողովրդավարական անցման մոդելը, եկան այն եզրակացության, որ լատինաամերիկյան և հարավեվրոպական «չընդունված» անցումների սկզբունքներից մեկը բուրժուազիայի սեփականության իրավունքի անվիճարկելիությունն է: Իսկ ինչ վերաբերում է հետկոմունիստական երկրներին, ապա այստեղ, որոշակի բացառություններով, գործեց մասնավոր սեփականության նկատմամբ «պարտոկրատիկ – նոմենկլատուրային» ընտրանու ոտնձգության անվիճարկելիության սկզբունքը, որն ամրապնդվեց միջէթնիկ հակասություններ հրահրելու միջոցով: Այս իրավիճակը հաշվի առնելով՝ միաժամանակ առավել հեշտ է բացատրել, թե ինչու և՛ Հարավում, և՛ Արևելքում դեպի մենիշխանության հետընթացը եղավ ավելի թույլ, քան ակնկալվում էր: Այս նկատառումներով էլ հետխորհրդային երկրներում մենիշխանները թե՛ քաղաքական, թե՛ տնտեսական իմաստով կորցրեցին էապես ավելի քիչ, քան կարծում էին, և այդ իսկ պատճառով նախկին իրադրությանը կամ ինչ-որ նման բանի վերադառնալու համար պայքարի խթաններ չկային:

Այսպիսով, հետկոմունիստական տարածքում ձևավորված քաղաքական իրողությունն իր հիմնախնդիրներով հատկապես էթնիկ ինքնության, ժողովրդավարական անցման բացարձակ նոր մոդել չի ենթադրում: Իսկապես, ԽՍՀՄ-ի փլուզումից հետո նոր անկախացած հանրապետություններում հաստատվել է մենիշխանության մի յուրահատուկ տեսակ և տնտեսական մի համակարգ, որը, սեփական տեսակի վերարտադրման նկատառումներով նպատակամտորեն ներգործելով հասարակության քաղաքական գիտակցության վրա, էթնիկ «եսին» մղում է պատմության հոլովույթում ձևավորված քաղաքական առասպելների և խորհրդանիշների վերարտադրման մարզինալ լաբիրինթոս: Սակայն, միաժամանակ, «նոր ժողովրդավարությունները» ստիպված են պայքարել (արդյունավետ կամ ապարդյուն) քաղաքական զարգացման ճգնաժամերի դեմ՝ ժողովրդավարական քաղաքական համակարգի ինստիտուցիոնալ կայացման ակնկալիքով: Տարածված կոռուպցիայի պայմաններում ամենակարևոր խնդիրը ոչ միայն օրենքի իշխանության, այլև իրավունքի գերակայության հաստատումն է: Այնտեղ, որտեղ առավելապես ճնշվում են անցման գործընթացում նոր պահանջներ ներկայացնող ընդդիմադիր փոքրամասնությունները, քաղաքական բանավեճերի կենտրոնում են նրանց իրավունքները և պարտականությունները: Այնտեղ, որտեղ պետությունը և բյուրոկրատական մարմինը ձևավորվել են ժողովրդավարացման գործընթացներից առաջ և այդ գործընթացների ընթացքում չխարխվեցին, նոր վարչակարգը, որպես կանոն, ավելի կայուն է, ինչպես

և մյուս տարածաշրջաններում: Այնտեղ, որտեղ քաղաքացիական հասարակությունն գոյություն չունի կամ թույլ էր և հատվածային, այն, ինչպես և մյուս տարածաշրջաններում, ստիպված էր կայանալ իշխանական հաստատություններին զուգընթաց: Հենց այս ամենն էլ ընդհանրացնելով՝ կարծում ենք, որ ժողովրդավարական անցման պայմաններում էթնիկ ինքնության պահպանման հիմնախնդիրներն այնքան որոշիչ են, որ կարելի է հիմնավորել աշխարհի բոլոր տարածաշրջանների ուսումնասիրության ժամանակ կուտակված ողջ փորձը և ձևավորված օրինաչափությունների օգնությամբ ամբողջացնել էթնոսների արժեքային համակարգի արդիականացման անցած ուղին՝ հանուն ժողովրդավարության որակի:

ЭТНИЧЕСКАЯ ИДЕНТИЧНОСТЬ В СТРУКТУРЕ ДЕМОКРАТИЧЕСКОЙ КОНСОЛИДАЦИИ

ЧОРОХЯН Т. А.

Резюме

Трансформация политической культуры общества и установление политических отношений в процессе модернизации этнической идентичности являются предварительным условием консолидации демократии как этапа политического развития.

Основываясь не только на уровне экономического развития, но и на принципах соблюдения правил общежития (*modus vivendi*) со стороны этнического “Я” как базовой формулы становления демократии, мы рассматриваем такой показатель, как “качество демократии”. Результаты исследований показывают, что страны посткоммунистического региона смогут преодолеть кризисы политического развития и консолидировать демократию только при наличии у этноса демократической (гражданской) политической культуры и осуществлении цивилиархического управления и конституционной политики.